ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«---» «----------» 2010թ. N --- - Ա

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից 2010 թվականի երկրորդ եռամսյակում հատկացնել 200,000.0 հազ. դրամ՝ Երևան քաղաքի վարչական շրջաններում ոռոգման ցանցի կառուցման նպատակով՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքերի և շինությունների կառուցում» հոդվածով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեով «Ոռոգման ցանցի կառուցում» ծրագրով նախատեսվել է 200,000.0 հազ. դրամ՝ Երևանի Դավթաշեն, Աջափնյակ, Կենտրոն, Շենգավիթ, Նոր-Նորք, Արաբկիր, Ավան, Քանաքեռ-Զեյթուն, Էրեբունի և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջաններում ոռոգման ցանցերի կառուցման նպատակով: Ոռոգման ցանցի կառուցման աշխատանքներն իրականացնելու համար մշակվել են դրանց նախագծանախահաշվային փաստաթղթերը, որոնց նախահաշվային արժեքը հաշվի առնելով անհրաժեշտ է ևս 200,000.0 հազ. դրամ՝ մայրաքաղաքի կանաչ տարածքների համար ոռոգման ջրի մատակարարման աշխատանքները լիարժեք իրականացնելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է «Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծով Երևան քաղաքի 2010 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացնել 200,000.0 հազ. դրամ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Գումար հատկացնելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ փոփոխության անհրաժեշտություն չի առաջանում:

Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ